ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆ

6 հարցերի կարճ պատասխաններ

1 Ի՞նչ է ապրանքային նշանը եւ ի՞նչ նշանակություն ունի այն:

Ապրանքային նշանը նիշ է, որն օգտագործվում է մեկ անձի ապրանքները և (կամ) ծառայություններն այլ անձի ապրանքներից և (կամ) ծառայություններից տարբերելու համար:

2 Ինչպե՞ս եւ որտե՞ղ դիմել ապրանքային նշան գրանցելու համար:

Ապրանքային նշանի գրանցման համար անհրաժեշտ է գրավոր կամ էլեկտրոնային եղանակով (www.aipo.am կայքի միջոցով) հայտ ներկայացնել **ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Մտավոր սեփականության գրասենյակ:** Հայտը կարող է ներկայացվել ինչպես անմիջապես հայտատուի, այնպես էլ նրա ներկայացուցչի կողմից:

Ապրանքային նշանի հայտ ներկայացնելուց առաջ խորհուրդ է տրվում ստուգել ապրանքային նշանի համապատասխանությունը Օրենքով սահմանված պահպանության պայմաններին:

3 Ո՞ր նիշերը կարող են գրանցվել որպես ապրանքային նշան:



Որպես ապրանքային նշաններ՝ կարող են գրանցվել **գրաֆիկորեն պատկերման** հնարավորություն ունեցող նիշերը, մասնավորապես՝

1) բառերը, բառակապակցությունները, անունները կամ կարգախոսները,
2) տառերը կամ թվերը,
3) նկարները, պատկերները կամ խորհրդանշանները.
4) եռաչափ պատկերները, մասնավորապես ապրանքի կամ դրա փաթեթավորման (տարայի) արտաքին տեսքը,
5) հոլոգրամները, գույները, գույների համակցությունները կամ կոմպոզիցիաները.
6) ձայնային ազդանշանները,
7) վերոնշյալ կետերի յուրաքանչյուր համակցություն:

4 Ո՞ր դեպքերում է ապրանքային նշանի գրանցումը մերժվում:

Հայաստանի Հանրապետության «Ապրանքային նշանների մասին» օրենքի համաձայն՝ ապրանքային նշանի գրանցման մերժման հիմքերը բաժանվում են բացարձակ և հարաբերական հիմքերի:

Բացարձակ հիմքերից է՝
- տարբերակիչ հատկություն չունենալը,
- միմիայն նկարագրող կամ բնութագրող տվյալներից բաղկացած լինելը,
- բացառապես ընդհանրացված կամ առևտրային ոլորտում տարածված բառերից բաղկացած նշաններ պարունակելը,
- Պետական խորհրդանիշների կամ պաշտոնական անվանումների օգտագործումը առանց թույլտվության,
- նմանությունը ավելի վաղ նշանի հետ,
- վնասումը կամ չարաշահումը,
- պատկերների օգտագործումը:

Հարաբերական հիմքերից է՝
- Նույնականություն կամ շփոթության աստիճան նմանություն ավելի վաղ նշանի հետ,
- Բարի համբավ ունեցող նշանի վնասում կամ չարաշահում,
- Հայտնի անձանց անունների, ազգանունների կամ պատկերների օգտագործում:

5 Ի՞նչ ժամկետում է գործում ապրանքային նշանի գրանցումը:

Ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետը **10 տարի** է՝ հայտի ներկայացման թվականից հաշված, որը կարող է երկարաձգվել յուրաքանչյուր անգամ **10 տարի** ժամկետով՝ առանց սահմանափակման:

6 Ի՞նչ է պաշտպանում գրանցված ապրանքային նշանը:

Ապրանքային նշանի իրավական պահպանությունը տարածվում է այն ապրանքների և (կամ) ծառայությունների վրա, **որոնց համար գրանցվել է ապրանքային նշանը:**